# ՓՐԿՉԻ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԵՈՖՐԻԻՆ
## ԼԱՄԲԵԹԻ ՊԱԼԱՏ

ԼՈՆԴՈՆ

«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

Զատկի հրաշափառ տոնի առիթով, երբ մեր Փրկիչը իր հաղթական հարությամբ հաղթեց մահվան, լուսավորեց կյանքի իմաստը և հաստատորեն ապահովեց հավիտենական կյանքը մեր հոգիներում համար, ես հոգեպես ուրախ եմ, եղբայրական սիրով ի Քրիստոս, շնորհավորելու Ձերդ Շնորհափայլությունը, բոլոր հոգևորականությունը և հավատացյալ բարեպաշտ ժողովուրդը:

Կաղոթեմ Անգլիկան Եկեղեցվո բարօրության և Ձեր սուրբ գործի հաջողության համար:

Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս,

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ՝
ՎԱԶԳԵՆ Ա.

ՓԱՐԻԶ

---

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻԻՆ (*ՄՈՍԿՎԱ*),
ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԼՔԻՍԵԴԵԿԻՆ (*ԹԲԻԼԻՍԻ*),
ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՀՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (*ԲՈՒԽԱՐԵՍՏ*),
ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԻՐԻԼԻՆ (*ՍՈՖԻԱ*),
ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱՆ ԿԻՅՎԻՏԻՆ (*ՏԱԼԼԻՆ*),
ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻՆ (*ՌԻԳԱ*)
ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄԵՆԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՆԻԿՈԼԱՅԻՆ (*ՄՈՍԿՎԱ*):

«Քրիստոս յարեա՛ւ»:

Ողջունում ենք Ձեզ, շնորհավորում ենք Ս. Զատիկը, ցանկանում ենք հոգևոր բերկրություն և մխիթարություն այս մեծ օրերին:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

ԷՋՄԻԱԾԻՆ

---

## ՄԻՆՍԿԻ ԵՎ ԲԵԼՈՌՈՒՍԻԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՊԻՏԻՐԻՄԻՆ

ՄԻՆՍԿ

Մեծ բավականությամբ կարդացինք Ձեր զատկական շնորհավորանքը: Շնորհակալ ենք Ձեր ուշադրության համար: Ընդունեցեք Մեր օրհնությունը: Անկեղծորեն կցանկանք Ձեզ հաջողություն և երկարակեցություն ի փառս Սուրբ և Ուղղափառ Եկեղեցվո:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ՝
ՎԱԶԳԵՆ Ա,

ՄՈՍԿՎԱ

---

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Ձեր Վեհափառություն, սիրեցյալ ի Քրիստոս, Սրբազնագույն Տե՛ր:

«Քրիստոս յարեա՛ւ»:

Բարեհաճեցե՛ք ընդունել ինձնից բերկրալի ողջույն և համբույր ի Տեր, որը հարություն առավ հանուն մեր երանելի հարության:

Աղոթում եմ հարուցյալ Տիրոջը, որպեսզի նա շարունակ մերձենա մեզ Իր օրհնությամբ՝ որպես լույս և կենաց աղբյուր և Իր ճշմարտության լույսով մշտապես լուսավորի մեր քահանայությունը, Իր սիրո բոցով ջերմացնի մեր սրտերը, որպեսզի և՛ մեր մեջ և՛ մեզ ապավինած հավատացյալ ժողովրդի մեջ տարածվի ու ապրի մաքուր հավատն ու սերը և հոգեկան բերկրանքը ի Տեր:

Թո՛ղ Տերը պարգևի Ձերդ սիրեցյալ Վեհափառությանը բազում տարիներ՝ հռչակելու փառքը և ուժը Նրա Հարության և տարածելու Նրա կյանքը ի բարօրություն Քրիստոսի Եկեղեցու և Ձեր ժողովրդի:

Ձերդ սիրեցյալ վեհափառությանը նվիրված ի Տեր,

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻԱ ՊԱՏՐԻԱՐՔ՝

**ԱԼԵՔՍԻ**

ՄՈՍԿՎԱ

---

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Հաճելի պարտականություն ունեմ Ձերդ Սրբությանը շնորհավորելու Քրիստոսի Ս. Հարության ամենաբերկրալի քրիստոնեական տոնի առթիվ: Հարուցյալն ի մեռելոց Հիսուս Քրիստոս թող հարություն տա և հաստատի ու ամրապնդի խաղաղությունը, սերը և բարեկամությունն ու համագործակցությունը համայն աշխարհի ժողովուրդների միջև:

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ՝

**ՄԵԼՔԻՍԵԴԵԿ**

ԹԲԻԼԻՍԻ

---

## ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Երախտագիտական շնորհակալություններ զատկական շնորհավորությունների համար: Հաճույքով սպասում ենք Ձեր այցելության ապրիլի 12-ին և Լամբեթում Ձեր հյուր լինելուն:

Եղբայրական սիրով,

ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ՝

**ՋԵՈՖՖՐԻ**

ԼՈՆԴՈՆ

---

## ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Սիրով շնորհակալություն եմ հայտնում շնորհավորությունների և մաղթանքների համար և ի բոլոր սրտե Հայ Եկեղեցու ղեկավարներին, քահանաներին ու հավատացյալներին ցանկանում եմ առողջություն, խաղաղություն և հոգևոր ուրախություն ի հարուցյալ Քրիստոս:

ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ՝

**ՀՈՒՍՏԻՆԻԱՆ**

ԲՈՒԽԱՐԵՍՏ

## ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Ձերդ Սրբությո՛ւն:

Բերկրալի պարտականություն ենք համարում շնորհավորել Ձեզ մեծ տոնի առթիվ և Ձեզ հետ հաղորդակից լինել մեզ հուզող խոհերով՝ Քրիստոսի Հարության տոնահանդեսի առնչությամբ:

Ուղղափառ Ս. Եկեղեցին լիակատար հիմունքով Տիրոջ Զատիկն անվանում է «տոների թագուհի»: Լուսապայծառ իրողությունը, որն այսօր մեծարվում է, բերկրանքի աղբյուրնե՜ր է բացել: Հարուցյալ Քրիստոսը, կյանքի գերիշխանը (Գործք Առաքելոց) հաղթեց մահին:

Նա ասաց յուղաբեր կանանց. «Ողջ էք» (Մատթ., ԻԸ 9), և առաքյալներին՝ «Ողջույն ընդ ձեզ» (Յովհ., Ի 19):

Այն օրից ի վեր ո՜րպիսի խնդություն է լուսավորում հավատացյալների սրտերը և ո՜րպիսի լիառատ խաղաղությամբ են համակվում Տիրոջը սիրողների սրտերը:

Քրիստոսի հարությունը մեզ համար ամենալուսաշող առհավատչյան է բարու հաղթանակի՝ ընդդեմ չարի:

Այս հավատը մեր սրտերում հույս ունենք, որ հավատացյալ Քրիստոսը, որը «խաղաղություն» ավանդեց իր աշակերտներին, կխաղաղացնի համայն աշխարհը, որի բոլոր ծայրերում կփայլի մարդասիրությունը, ճշմարտությունը, փոխադարձ վստահությունը և եղբայրական հարգանքը ժողովուրդների միջև:

Ողջագուրվելով Ձեզ հետ սիրով ի Քրիստոս մենք հարգանոք շնորհավորում ենք Ձեզ Սուրբ Սինոդի և իմ անունից՝ Տիրոջ լուսապայծառ Զատկի առթիվ և ցանկանում Ձերդ Սրբությանը, սրբազան միաբանությանը և Ձեզ ապավինած հոտին խաղաղություն ու բերկրանքներ ի Տեր՝ ի բարօրություն Ձեր Ս. Եկեղեցու և հանուն Ձեր մեծ Հայրենիքի:

ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ՝
**ԿԻՐԻԼ**

ՍՈՖԻԱ

---

## ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Մեծ բերկրանքով ստացա Ձեր տոնական շնորհավորանքը սրտագին ցանկություններով հանդերձ: Ընդունեցեք ջերմագին շնորհակալությունս: Իմ կողմից ամբողջ հոգով շնորհավորում եմ Գերագույն Հոգևոր Խորհրդին՝ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնի առթիվ: Ցանկանում եմ Ձեզ երկնային խնդություն և կայունություն Ձեր աշխատանքում:

ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ՝
**ՅԱՆ ԿԻՅՎԻՏ**

ՏԱԼԼԻՆ

---

## ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Շնորհավորում եմ Ս. Զատկի մեծ տոնի առթիվ Խորհրդի հարգելի անդամներին և առանձնապես Ամենայն Հայոց Սրբազնագույն Պատրիարք Կաթողիկոսին:

«Քրիստոս յարեա՜ւ»:

ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ՝
**ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ**

ՌԻԳԱ

---

## ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

«Արդարև յարեա՛ւ Քրիստոս»:

Ամբողջ հոգով փոխադարձաբար շնորհավորում եմ Ձեզ բոլորիդ: Հղում եմ ջերմ ցանկություններ:

ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄՆԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ՝

**ՆԻԿՈԼԱՅ**

ՄՈՍԿՎԱ

---

## ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Ձերդ Ս. Օծությո՛ւն, Սրբազնագույն Տե՛ր:

«Քրիստոս յարեա՛ւ»:

Այս «նվիրական և սուրբ օրը» առ Նրան ունեցած խոր բերկրանքի զգացմունքով, որ մեզ համար տառապեց և հաղթականորեն հարություն առավ, ամբողջ հոգով հարգալից ողջույն եմ հղում Ձեզ և խնդրում ընդունել իմ անկեղծ ցանկությունները, ունենալու կատարյալ հաջողություն և երկար կյանք՝ ի բարօրություն Քրիստոսի Ս. Եկեղեցու և հօգուտ համայն՝ ներկայումս խռովահույզ, աննախընթաց սարսափների հանդեպ կանգնած մարդկության, սարսափների, որոնք կարող են ժողովուրդների միջև ծագել պատերազմական երկպառակություններից և այն մարդկանց դավերի հետևանքով, որոնք տակավին երազում են բովանդակ աշխարհը ներկել արյունով:

Հարուցյալ Քրիստոս թո՛ղ արժանացնի մեզ բոլորիս հանդիսանալ մշտապես աստվածային հոգու կրողներ, սիրո և խաղաղության պաշտպաններ մարդկանց միջև և թո՛ղ չդադարի Նրա բերկրանքը լուսավորելու մեր հոգին, և Նրա կյանքը թո՛ղ նորոգի մեր կյանքը:

Ձերդ Ս. Օծության համար միշտ եռանդուն աղոթարար, խոնարհությամբ Ձերդ,

ՄԻՆՍԿԻ ԵՎ ԲԵԼՈՌՈՒՍԻԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ՝

**ՊԻՏԻՐԻՄ**

ՄԻՆՍԿ

---

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Մոսկվայի Հոգևոր ճեմարանը հանձին Ձերդ Սրբության սրտագինս շնորհավորում է, հնադարյան Հայոց Եկեղեցին Քրիստոսի լուսապայծառ Հարության տոնի առթիվ և ցանկանում է բարգավաճում հօգուտ մեր մեծ Հայրենիքի:

«Քրիստոս յարեա՛ւ»:

**Մոսկվայի Հոգևոր ճեմարանի**
**Ռեկտոր՝ ավագ քահանա** ՌՈՒԺԻՑԿԻՅ
**Տեսուչ՝ պրոֆեսոր** ԴՈԿՏՈՒՍՈՎ

ՄՈՍԿՎԱ, ԶԱԳՈՐՍԿ